ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«31» մայիս 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-55/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով ««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ի 16.05.2016թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. ««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 16.05.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-16/2-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2» ծածկագրով ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի 11.05.2016թ. որոշմամբ հաստատվել են Ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի հրավերի պահանջներին

համապատասխանության գնահատման արդյունքները, որոնց համաձայն՝ ներկայացված չափաբաժիններից 2-ի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ա/Ձ Համլետ Հովսեփյանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը ապրանքների աշխատանքների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով: Նշված կարգավորումից հետևում է, որ Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնելիս՝ պետք է հաշվի առներ այն հանգամանքը, որ Ընթացակարգի շրջանակներում մատակարարվելիք ապրանքներից առաջացող բոլոր հարկերը պետք է հաշվարկված լինեն առաջարկվող գնի մեջ:

Ընկերությունը վկայակոչել է նաև «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3.1-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ նույն օրենքով այլ բան սահմանված չլինելու դեպքում նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) իրականցնելու դեպքում ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրում են՝ նույն օրենքով սահմանված դեպքերում՝ տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինները, այդ մարմինների ստեղծած հիմնարկները, ՀՀ կենտրոնական բանկը:

Ընկերությունը բողոքով նշել է, որ վերոհիշյալ կարգավորումից հետևում է, որ մասնակիցը հանդիսանալով ոչ ռեզիդենտ, Ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու դեպքում նշված պայմանագրի շրջանակներում Պատվիրատուն էր կրելու ԱԱՀ վճարման պարտավորությունը և ԱԱՀ-ի՝ գումարը պահում էր կատարելու պայմանագրի գնից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը ներկայացված գնային առաջարկի հաշվարկի մեջ ներառել է նաև ՀՀ պետական բյուջե վճարկվելիք ԱԱՀ-ի գումարը՝ այդ մասին նշում կատարելով նաև գնային առաջարկում:

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի Ընթացակարգի արդյունքներով պայմանգիր կնքելու մասին որոշումն անհիմն է և

ենթակա է վերացման, քանի որ Ընթացակարգում տեղ են գտել հրավերով սահմանված պահանջների էական խախտում:

Ընկերությունը, որպես վերը նշված խախտում, մատնանշել է այն, որ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.2.2 կետով սահմանված է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս՝ գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց մասնակիցներին որոշելիս՝ գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց նույն հրավերի 2-րդ մասի 4.2 նշված հարկի գումարի հաշվարկման:

Հաշվի առնելով վերը ներկայացված փաստը և Ա/Ձ Համլետ Հովսեփյանի ներկայացրած գնային առաջարկը՝ Ընկերությունը գտնում է, որ Ա/Ձ Համլետ Հովսեփյանի գնային առաջարկը չի բավարարում հրավերի 7.2.2 կետով սահմանված պահանջին (նվազագույն գինը չի հանդիսանում), քանի որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը ավելի ցածր է:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ, 31-րդ, 45-րդ, 48-րդ հոդվածները՝ Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է դադարեցնել «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏվ-ԱՊՁԲ-16/2-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու մասին 11.05.2016թ. թիվ 1.1.-1.4. որոշումը:

Ընկերության ներկայացուցիչը, ներկա գտնվելով ԳԲԽ-55/16 բողոքը քննող հանձնաժողովի 20.05.2016թ. ժամը 17:00-ին կայացած նիստին, պնդել է իր բողոքը:

<u>2. ՀՀ Ազգային անվտանգության ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 24.05.2016թ. թիվ 20/319 գրությամբ ներկայացրել է «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏվ-ԱՊՁԲ-16/2-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2»

ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը և հաշվի առնելով գնման առարկային ձեռքբերման անհրաժեշտությունը, մատակարարման ժամկետները (2016թ. մայիս ամիս) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է հնարավորինս սեղմ ժամկետներում կայացնել որոշում և տեղեկացնել բողոքի քննության արդյունքների մասին:

Պատվիրատուի ներկայացուցիչը, մասնակցելով ԳԲԽ-55/16 բողոքը քննող հանձնաժողովի 20.05.2016թ. ժամը 17:00-ին կայացած նիստին, հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների հիման վրա և գործել է իրավաչափ:

3. ԳԲԽ-55/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-55/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-16/2-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. ««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ն ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-16/2-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել:

3. Ընկերությունը հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով հետևյալ տեսքով՝

(ՀՀ դրամ)

Չափաբաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/	Քանակ	Առաջարկված միավորի գին
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*	*7*	*8=6+7*
2	Մսաբուսական պահածոններ	4 935 000	423 000	**	5 358 000 Հինգ միլիոն երեք հարյուր հիսունութ հազար	4 700	1 140

**Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող չէ, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 5-րդ սյունակում:*

***Առաջարկված ընդհանուր գինը ներառում է 16,67% ԱԱՀ, որը կազմում է 893 000 ՀՀ դրամ:*

4. Ա/Ձ Համլետ Հովսեփյանի կողմից ներկայացվել է գնային առաջարկ հետևյալ տեսքով.

(ՀՀ դրամ)

Չափաբաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/	Քանակ	Առաջարկված միավորի գին
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*	*7*	*8=6+7*
2	Մսաբուսական պահածոներ	4 950 666.67	329 000	1 055 933.33	6 335 600 Վեց միլիոն երեք հարյուր երեսուն հինգ հազար վեց հարյուր դրամ	4 700	1 348

**Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող չէ, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 5-րդ սյունակում:*

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ըստ ներկայացված գնային առաջարկների, 22.04.2016թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ Ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներ է ճանաչել համապատասխանաբար «Ֆոտոն» ՍՊԸ-ին և Ա/Ձ Համլետ Հովսեփյանին:

6. Ընկերությունը Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 4 հավելվածով՝ ներկայացրած գնային առաջարկով, ճանաչվել է 3-րդ տեղ զբաղեցրած մասնակից:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 06.05.2016թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտը:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 11.05.2016թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1. կետով որոշել է Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Ա/Ձ Համլետ Հովսեփյանին:

9. ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԱՊՁԲ-16/2-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 11.05.2016թ. կայացրել է պայմանագիր կնքելու մասին որոշում, որի մասին հայտարարությունը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է 12.05.2016թ.՝ սահմանելով անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

4. ԳԲԽ-55/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով ««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ի 16.05.2016թ. ներկայացրած բողոքը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 24.05.2016թ. թիվ 20/319 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող չգրանցված (չհաշվառված) օտարերկրյա անձի կողմից Հայաստանի Հանրապետությունում ԱԱՀ-ով հարկվող գործարք իրականացվելու (ներառյալ՝ այդ անձի սեփականությունը հանդիսացող ապրանքներ ներմուծվելու) դեպքերում այդ գործարքների մասով պայմանագրային հարաբերությունների կողմ հանդիսացող՝ ԱԱՀ վճարող համարվող կամ ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրող անձինք, բացառությամբ արտոնագրային կամ հաստատագրված վճար կամ

շրջանառության հարկ վճարող կամ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող անձանցից և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանցից, օտարերկրյա անձանց փոխարեն որպես հարկային գործակալ կրում են ավելացված արժեքի հարկ հաշվարկելու և վճարելու պարտավորություն՝ սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում:

Նույն օրենքի 3.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքով այլ բան սահմանված չլինելու դեպքում սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) իրականացնելու դեպքում ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրում են՝ սույն օրենքով սահմանված դեպքերում՝ տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինները, այդ մարմինների ստեղծած հիմնարկները, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ ***նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:***

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 35-րդ կետի 2-րդ «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: ***Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում՝***

մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց նույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ն ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-16/2-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ և գնային առաջարկի 5-րդ՝ «ԱԱՀ*»-ի, սյունակում, առանց նշելու տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարը, այնուամենայնիվ, գնային առաջարկում հղման տեսքով նշել է, որ իր կողմից առաջարկված ընդհանուր գինը ներառում է նաև 16,67% ԱԱՀ, որը կազմում է 893 000 ՀՀ դրամ: Այլ կերպ ասած, Ընկերությունը ներկայացված ընդհանուր գնի մեջ (ըստ ներկայացված գնային առաջարկի՝ նաև ինքնարժեքի մեջ) ներառել է նաև ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի գումարը:

Մինչդեռ ներկայացրած բողոքով Ընկերությունը հայտնել է, որ չի հանդիսանում ռեզիդենտ մասնակից, այսինքն համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետի՝ չի կրում ՀՀ-ում ավելացված արժեքի հարկ վճարելու պարտականություն, սակայն դրա հետ միաժամանակ գնային առաջարկի 5-րդ՝ «ԱԱՀ*»-ի, սյունակում, առանց նշելու տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարը, այնուամենայնիվ, ընդհանուր գնի մեջ (նաև ինքնարժեքի մեջ) ներառել է նաև ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի գումարը:

Այսպիսով, Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ Պատվիրատուի կողմից Ընկերության գնային առաջարկի գնահատումը և համեմատումը կիրականացվեր առանց ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի գումարի հաշվարկման, եթե ««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ն հանդիսանար տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ավելացված արժեքի հարկ վճարող և իր գնային առաջարկում առանձնացված տողով (5-րդ

սյունակում) նախատեսեր այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը, ինչը տվյալ պարագայում բացակայում է:

Հետևաբար Պատվիրատուն, գործելով Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության դրույթների համաձայն, Ընկերության հայտը գնահատելիս՝ հիմք է ընդունել Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի 3-րդ և 4-րդ սյունակներում նշված՝ ինքնարժեքի և շահույթի հանրագումարը՝ առաջարկված ընդհանուր գինը, որը կազմում է 5 358 000 ՀՀ դրամ:

Նման պայմաններում գտնում ենք, որ Պատվիրատուն գործել է իրավաչափ՝ առաջնորդվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ ««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ի կողմից 16.05.2016թ. ներկայացված բողոքը անհիմն է և առաջարկում է մերժել Ընկերության բողոքը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-55/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան